ՁՈՐԵՔՇԱԲԹԻ—13—ՕԳՈՍՏՈՍ ՖԻԱՆԵԼԻՆՆԵՐՈՒԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2695 Ն.—Տ.—25—ՀԳՈՍՏՈՍ—1880

ԳԻՆ Մ Ա Ն Ք

Տարեկան դին Կ. Պոլսոյ հր. 10 Մկ.
» » Գաւառաց » 12 »
Վեցամս. » Կ. Պոլսոյ » 5 »
» » Գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 2 1/2 Լիրա
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրուշ, երկու անգամի համար 2 ղրուշ է. աւելի անգամներու համար զատ տարկիրութիւն կը լինի։
Մէն մի թիւ 40 փարա արժէ։

ՄԱՅՐ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԻՆ Մ Ա Ն Ք

Գուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը Խմբագրութիւնս վրայ է։
Լրագրաց վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն Խմբագիր—Տնօրէնին սիպսի ուղղուի, Գալատիա Առնարքճը-լար Ճատաէսի թիւ 198, Նօրօ խան, Մասիսի գրասենեակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունիր։
Ձգուած նամակ, յօդուած, եւ ետ չեն տրուիր։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՍ 13 ՕԳՈՍՏՈՍ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս տողերս հասած հեռագիրներ

Սիմլա 24 օգոստ.

Գանատահարէն եկած վերջին լուրեր կը ծանուցանեն թէ Անգլիացիք օգոստ. 18ին Գանատահարի բերդէն դուրս ելլելով յարձակում ըրեր են Աֆղանաց վրայ, և այս կռուոյն մէջ Անգլիացիներէն 8 սպայ և 150 զօրական սպաննուեր և 5 սպայ վիրաւորուեր են։ Աֆղանք՝ Գանատահարի ամրարակներուն դէմ ատամի հրացանաձգութիւն կընեն։

Աթէնք 24 օգոստ.

Էթնիքոն Փնէվմա լրագիրը կը կարծէ դիտնալ թէ 100 միլիոն ֆրանքի փոխառութեան մը համար Փարիզի մէջ բացուած բանակցութիւնք տնյաջող ելեր են։

Փարիզ 24 օգոստ.

Գաղղիական Ֆրիէտլանա և Սիքրէն զրահաւորք, Խրոնսլ լրաբեր շաբենաւուն հետ այսօր Պրէսթէն ճանրայ ելան Թուլոնայ երթալու համար։

Ճէզայիրի լրագրերը Սիկիլիոյ մէջ հրատարակեալ Արաբ լրագիր մը մատնանիշ կ'ընեն, որ Ճէզայիրցւոց ապըստամբութիւն կը քարոզէ եղեր Գաղղիոյ դէմ։ Կ'ըսեն թէ Խալիֆայէն զօրք և ռազմամթերք կը բերուի Ճէզայիր։

Հռոմ 24 օգոստ.

Պապին արտաքին գործոց Նախարար Նինա կարդինալը ծանր հիւանդ է։

Լոնտրա 24 օգոստ.

Անգլ. Քոնս.		97 15/16
Օսմ. »		9 1/2
Փոխ.	1865	10 1/8
»	1869	10
»	1871	69 1/4
»	1872	16 3/4
»	1873	9 3/4
»	1877	82 3/4
Պանք Օթոման		9 7/8
Ռուս. փոխ. 73ի		89 1/2
Եգիպտ. միացեալ		62 1/8
» արտօնաւոր		90 1/8
Տայրա Սանիէ		69 7/8
Փոխ. Ռուշիա		93 5/8

Փարիզ 24 օգոստ.

Օսմ. Քոնս.		9,70
» Երկաթուղի		30,75
Պանք Օթոման		502,50
Դպրդ. »	5 0/0	119,52 1/2
» »	3 0/0 Նոր	85,30

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Գուսօմայի հրամանատար Օսման փաշան նոյն նահանգին կուսակալ ուռանեցաւ։

——

Միւշիր Ահմէտ Լյուտպ փաշան երէկ արքունի շքեղութեամբ Մէջանիկ դնաց։

Իրեւ սպայդ կը թուի թէ Ահմէտ Լյուտպ փաշան Դաղի Ահմէտ Մուխթար փաշային տեղ Մանասթրի կուսակալ և կայսերական երրորդ զօրաբանակին հրամանատար պիտի անուանի։

——

Ծանուցուած էր թէ վեհ. Սուլթանին դահակալութեան տարեդարձին առթիւ Թէփէ-Պաշի թաղականական պարտիզին մէջ պարահանդէս մը պիտի տրուի ի նպաստ Ամաօլուի սովելոց։ Ցանձնախմբին պաշտօնական յայտարարութիւնն ալ լրագրաց միջոցաւ հրատարակուած էր։

Այս պարահանդէսը կառավարական հրամանաւ արգիլեցաւ։

Վաղբթ լրագիրն իւր այս առուր թուով կը ծանուցանէ թէ երէկ Կ. Պոլսոյ Բաղաքապետ Մաղհար փաշան յիշեալ պարահանդէսին կազմիչ Աբիֆ Էֆէնտին կանչելով դիտել տուեր է թէ մինչ թէ-Պաշի-Պաշի պարտէզը կառավարական չէնք մ'է, անոր պարահանդէս տալու համար կառավարութենէն արտօնութիւն չէր ստացուած. թէ պարահանդէսի յանձնախումբ մը կազմուած է, բայց անդամներէն շատեր այս դործէն տեղեկութիւն չունին. և թէ այդպիսի հանդիսու-թիւն մ'ընել՝ պաշտօնական դործ մ'է, որ առանց տերութեան հրամանին՝ չկրնար կատարուիլ։ Հետեւաբար, Մաղհար փաշան խմբագրողներէ Աբիֆ էֆէնտիին թէ այդ պարահանդէսն արդիլուած է։

Իսկ Օթմանպուլ կը կարծէ թէ պարահանդէսին արդիլումը Բամազանի պատճառաւ էր, որով այդ հանդէսը միայն յետաձգուած կը լինի։

——

Հայաստանի և Բրդաստանի Ազգային հիւպատոս Պ. Թրօթթը հազարապետը նախընթաց օր Պէյքոզը փաշային հետ Կ. Պոլիս հասաւ Կարինէն, և Թարապիա իջաւ։

——

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Իշլի մէջ Գերմանիոյ և Աւստրիոյ կայսերաց տեսակցութեան վրայ դոհացուցիչ տեղեկագրեր եկած են Բ. Դրան։

——

Կ'ըսուի թէ Պ. Կոշէն խմբագրողներ է Բ. Դրան թէ Տուրչինեցի կողմն Ալպանիայի սահմանի դիմադրութիւն մ'ընելու կը պատրաստուին։

——

Պէյքոզը փաշայի պաշտօնին նշանակումն այս աւուր Վաղբթի մէջ հետեւեալ տեղեկութիւնները կը տեսնեմք.

«Անատօլուի վիճակը քնոյ Սայիտ փաշան և Պէյքոզը փաշան երէկ Բ. Դուռն և ուրիշ պաշտօնատուներն երթալով, նախարարաց հետ տեսակցեցան։ Նոքա հաւանական տեղեկագիր մը պիտի մատուցանեն այն անօրէնութեանց նշանակումն, որք պէտք է ի դործ դրուին իրենց պարտած դաւառաց մէջ։ Յայտնի է թէ մեծ օգուտ քաղուած է յիշեալ երկու փաշայից անկողմնակալ քնութիւններէն։»

——

Սամսոնի կառավարիչ Աւսոսիտէս փաշայի ընթացից նկատմամբ կարծեաց անհամաձայնութիւններ կան։ Կղզւոյն մէջ երկու կուսակցութիւն կազմուած է, որոյմէ մին, այսինքն Աւսոսիտէս փաշան չուզող մասը, Կ. Պոլիս պատգամաւորութիւն մը ղրկելով, նոքա պաշտօնանկութիւնը կը խնդրէ։

——

Վաղբթ կը ծանուցանէ թէ Եւրոպական Թուրքիոյ նահանգաց համար շինուած կազմական կանոնադիրը՝ միջազգային յանձնախմբին անդամներէն ստորագրուեր է երէկ։ Ասոնցմէ ոմանք առաջարկեր են որ Ալպանիոյ մէջ ալ ի դործ դրուի. բայց Օսմ. պատուիրակք ձեռնպահ եղեր են։ Գաղղիական պատուիրակ Պ. Օպարէ երէկ մեկնեցաւ մայրաքաղաքէս, և Անգլիական պատուիրակ Լորտ Ֆիթ-Մորիս ալ այս օրերս մեկնելու վրայ է։

——

Թէ կանոնաւոր վարչութեամբ մը տերութեան հասոյթներն օրչափ կրնան աւելնալ, վեց անուղղակի տարոյ վարչութիւնն, որ Եւրոպացւոյ ձեռք է, օրինակ մ'է ասոր։ Թուրք լրագիրք կըսեն թէ երբ այդ վարչութիւնն անցեալ տարի դործի սկսաւ, տնտեսական միայն 39,000 ղրուշ հասոյթ ունէր. իսկ այժմ, եկամտից նոյն աղբիւրներէն տնտեսական 135,000 ղրուշ հասոյթ կ'ընդունի։ Հաշիւ կը լինի թէ նոյն վարչութեան ձեռք առած միջոցներով, որք բազմաթիւ զեղծումներ անհնար ըրած են, տարեն տարի հասոյթին 100ին 15—20 ի համեմատութեամբ աւելցած է, և ապահով է եղեր թէ քանի մը տարիէն ասոր կրկինն հասոյթ պիտի ընդունի եկամտից նոյն աղբիւրներէն։

——

Դարա-Հիսարի Միւթէսարրիֆը Պրուսայի կուսակալ Ահմէտ Վէֆիզ փաշային տուած հրահանգներն ի դործ դնելու փոյթ չընելուն համար պաշտօնանկ եղաւ։ Դարա-Հիսարի ուրիշ գիւղաւոր պաշտօնատարաց ալ տերութեան դանձէն 400 հազար ղրուշ դոյցած լինելն ըստուդուեր է։

——

Նախընթաց դիշեր Աւստրիական դեսպան Պ. Տը Բալիս և նորա տնտեսին Աւյտսֆիլայի մկրտիչն երթալով, դիշերուան նամակը տուան, և յետոյ Պոլսոյ կենդրոնական տեղւոյն Բամազանի հանդէսներն աչքէ անցուցին։

——

Ռատիկանութեան նախորդ նախարար Հաֆիզ փաշան առ Լա Թիւրքի նամակ մ'ուղղելով ըսած էր թէ ինք ոչ միայն պարտք չունի կառավարութեան, այլ և 107,000 ղրուշ պահանջք ունի անվճար ամ ստանելիներէն։

Սիթանպուլ լրագիրն իւր երէկուան թուով «վաւերական տպրիւրէ» և «մեծ մարդէ մը» առած ինչ ինչ տեղեկութիւնները կը հրատարակէ, որք Հաֆիզ փաշային յայտարարութեան բոլորովին չեն համաձայնիր։ Ն. Վսեմութիւնը բանտարկուելէն յետոյ ոստիկանութեան խորհրդին առջև բերուեր է, ուր առանց վարանման յայտարարեր է թէ իւր պաշտօնատան յատկացեալ դումարէն 52,000 ղրուշ ծախք ըրած էր դաղտնի ոստիկանութեան պիտոյից համար, փոխանակ 10,000 ղրուշի, որ Պիւտճէին մէջ նշանակուած էր այդ նպատակին համար։ Հաֆիզ փաշան յանձն առեր է իւր անմեղութիւնը ապացուցանել բայց մեռցած դումարն։

Յետոյ Մէհմէտ պէյ խորհրդին ներկայանալով ըսեր է թէ Հաֆիզ փաշան ոստիկանութեան աւանդի տուուկէն 16,000 ղրուշ առած էր, որոյ ընկալագիրն իւր (Մէհմէտ պէյին) քով է։ Ասոր վրայ, ոստիկանութեան խորհուրդը միաձայն որոշեր է թէ Հաֆիզ փաշան ներողութեան արժանի չէ, և թէ օրինաց ամենայն խստութեամբ պէտք է պատժուի։ Սիթանպուլ ասպարէզ կը կարդայ Հաֆիզ փաշային, որ այս լուրն ալ սուտ հանէ։

——

Գաղղիական լրագրաց մէջ հետեւեալը կը կարդամք.

«Ակէց հինդ տարի առաջ, Փարիզի Լաֆայէթի փողոցը ընակեալ Պ. Ֆ. վաճառականին երկու պաշտօնեայներն հինդ հազար ֆրանքի դուման մը դողնալով անյայտ եղած էին, և ոստիկանութիւնն ալ չէր կրցած զանոնք դտնելու ժամանակ անցեր էր, և վաճառականն ոչ ևս կը յիշէր եղած դողութիւնն։ Ակէց քանի մ'ամիս առաջ առաւօտ մը հետեւեալ նամակը կ'ստացեալ։

«Իմ վիճակս այնչափ լաւ է որ «կրնամ ձեզմէ փոխ առած հինդ «հազար ֆրանքս ձեզ վերադարձնել։»

«Վերջին օրերս ալ երկրորդ նամակ մը կ'ստանայ Համբուրկէն։ Իւր երկրորդ պաշտօնեայն ալ նմանապէս նոյն դումարը կը ղրկեր իրեն՝ ներում խնդրելով անպատեհ կերպիւ իրմէ բաժնուելուն վրայ։ և կ'աւելցնէր թէ չդիտնալով իւր ընկերին ինչ եղած լինիլն, ինք միայնակ կը վերադարձնէր հինդ հազար ֆրանքը։

«Այսպէս Պ. Ֆ. իւր դողցուցած հինդ հազար ֆրանքին փոխարէն տասն հազար ֆրանք ստացաւ։ Անշուշտ չդանդաղիր իւր դողերէն։»

——

Ճարտնի ծերակոյտը մեծամասնութեամբ ընդունեց կառավարութեան առաջարկած մի օրէնքն, որ բազմակնութիւնը կ'արդիլու այսուհետև Ճարտնի մէջ։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆ է

Երէկ իրիկուն պոյսեցաւ		10,20
Այս առաւօտ բացուեցաւ		10,20
Կէս օրին		10,18
Բաւմկլի երկաթուղի	Փր	29,50
Թղթադրամ	Օսմ. լիր	1210
Թրամուայ	»	370

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

12 Օգոստոս

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. լիր.	4, 6
» Փոխառնակութեան	»	2,38
Կ. Պոլսոյ Պանքային	»	7,25
Բրէսի Ժէնէրալ	»	3,28
Փոխ. 1863	Ֆր.	50,
» 1865	»	50,
» 1869	»	48,50
» 1872	»	17,
» 1873	»	47,

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

13 Օգոստոս

Անգլ. լիրա	ղրշ.	110 16
Նարալան ոսկի	»	37 38
Խրէսիրալ Ռուս	»	90 25
Ռուսական թղթադրամ. 3 բալ. 64 քարէք		
Դէսէտից	ղրշ.	51 20
Մէճիտիէ տարրերութիւն	»	7 22
Հինդնոց	»	213 10
Վեցնոց	»	123 35
Մէթալիք	»	215
Պլինտ	»	585
5 փարանոց	»	280

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիական դեսպան Պարոն Տը Բալիս կիրակի իրիկուն ժամը 11ին միջոցները Ս. Պատրիարք Հօր տունը գնաց, և մէկ ժամէն աւելի տեսակցեցաւ Նորին Սրբազնութեան հետ։

——

Նարլը դափսի թաղական խորհուրդը կը ծանուցանէ մեզ թէ ուրբաթ դիշեր թաղին եկեղեցւոյն մէջ գողցուած նիւթերն էին հինդ կտոր արծաթեայ խաչեր և սրբոց մասունքներ 2850 տրամ ծանրութիւնով, և թէ սնրագործներէն մին Պէշիկթաշի թաղական խորհրդոյն և եկեղեցւոյն սպասաւորաց ձեռօք բռնուած, և կրաստակալ մասունքներուն մեծ մասը դտնուելով Պատրիարքարանի միջոցաւ Նորին դարուի թաղ. խորհրդոյն յանձնուած են։

——

Մշոյ առաջնորդ Այէանթճեան Գեր. Գրիգորիս եպիսկոպոս անձնական տակաւութիւնը դարմանելու համար Պոլիս դալու հրաւէր խնդրած լինելով, Ս. Պատրիարք Հայրն հեռագրեց ի պատասխանի թէ այդ պատճառաւ Պոլիս դալու արտօնութիւն ունի։

——

Մշոյ Ս. Կարապետի վանահայրը Գեր. Մամբրէ եպիսկոպոս Բաղէշէն հեռագրով կը ծանուցանէ թէ Բաղէշի Դաւառական ժողովն առաջնորդական ընտրութիւն չկատարեր, և թէ ինք պարտաւորուած է իւր վանքը վերադառնալ։

Ս. Պատրիարք Հայրն հեռագրեց թէ պէտք է հոն մնայ իրեն յանձնուած առժամեայ պաշտօնով, մինչև որ առաջնորդն ընտրուի և կամ առաջնորդական տեղապահ մը կարդուի ի Բաղէշ։

——

Թէև Մասիս լուրջ թերթ մ'է, բայց լուրջ համբաւուց ուրիշ լրագրաց ղաւարճալիներն յիշելով՝ իւր սիրտն դէմ չմեղանչեր։ Արդ, Թէրճէմանը Հաղիգամի լրագիրն իւր վերջին թիւերէն միոյն մէջ Պարսկի մը հետ ունեցած խօսակցութիւնը կը պատմէ, յորում թուրք խմբագիրը դլխաւորապէս սա միտքը կը բացատրէ թէ Եւրոպացիք բոլոր Իսլամներուն դէմ թշնամութիւն ունին, և թէ թուրքիայէն յետոյ կարդը Պարսկաստանի պիտի դայ։ Այս մասնաւ խմբագիրը կ'ըսէ իւր խօսակցին։—

«Այո՛, ամենէն առաջ կարդը ձեզ պիտի դայ, զի Պարսկաստանի մէջ ալ Հայեր կան, մանաւանդ թէ սահմանակից են մեր Հայոց. և ուրախեսուք ձեր Հայերն ալ կը հարստահարին, զանոնք ևս փրկել՝ մեր Եւրոպացի բարեկամաց պարտքը պիտի լինի իրենց Քրիստոնէական սիրոյն պատճառաւ։

Պարսկը. — Բայց մեր երկրին մէջ խիստ քիչ Հայ կայ։

Թ. Հոդէթոր. — Ի՞նչ կ'ըսէք, ի՞նչ կ'ըսէք. կը սխալի՛ք. այն տեղն Հայոց Ամեն. Պատրիարքը վիճակագիր մը չունենալով՝ պիտի ասէր թէ Պարսկաստանի տասն միլիոն բնակիչներէն տասն և հինդ միլիոնը Հայ է։

Պարսկը. — Տասն եւ հի՞նդ միլիոնը, թէ հինդ միլիոնը։

Թ. Հոդէթոր. — Տասն և հինդ միլիոնն, այո՛. զի Ամեն. Պատրիարքին վարպետութիւնն է տասն հազիւն տասն և հինդ հազար Հայ հաշուել։»

Թէ Թուրք լրագիր մը թշնամաներ է Հայոց հոգևոր Գլուխը, զարմանալի չէ այս. բայց թէ յանդգնած է խեղաթիւրել վիճակագիր մը, որ՝ ըստ վաւերական յայտարարութեանց՝ ուրիշ շատ վիճակագրերէ աւելի մեծ է ճշմարտութեան, այդ է դաւնչատանը։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Հելլենական խնդրոյն վրայ մեր Թուրք պաշտօնատարաց գուշակութիւնները դժբաղդաբար ի դերև ելան։ Կը ծանուցուի թէ մեծ տէրութեանց դեսպաններուն ստացած հրահանգներն հատած են, և պատասխանն այսօր կամ վաղը հաւաքական ծանուցագրի մը ձեւով Բ. Դրան պիտի հաղորդուի։ Ֆար տիւ Պոսֆոր կը կարծէ թէ այս ծանուցագրին լեզուն սպառնական է։ Հաստատապէս կ'ըսուի նաև թէ Բ. Դրան առաջարկները բոլորովին կը մերժէ։ Ինչպէս յայտնի է, Բ. Դուռը կ'առաջարկէր որ Եանեա, Մէձոմօ և Լարիսա իրեն մնալով, Յունաստանի արուելիք միւս հողերուն համար իրեն հետ խորհրդակցելու արտօնութիւն տուի կ. Պոլսոյ դեսպանաց, այսինքն կ. Պոլիս դեսպանախորհուրդ մը լինի։ Այսպէս անուղղակի կերպիւ Պերլինի դեսպանախորհուրդը պիտի մերժուէր, և կ. Պոլսոյ մէջ նոր դեսպանախորհրդոյ մը միջոցաւ բանակցութիւնք պիտի լինէին։ Տէրութեանց միջև անհամաձայնութեանց վրայ շահագիտելով՝ հաւանական էր որ Բ. Դրան առաջարկներն իրենց արդիւնքն ալ տրտաղրէին, սակայն Եւրոպական ներգաշնակութիւնն այս անգամ ևս սեսականապէս կենդանութեան նշան կը ցուցնէ։

Նոր հրատարակեալ Օսմանը անուն Ֆրանքօ-Թուրքերէն լրագիրը բաւական մեծ կարևորութիւն տալով քանի մը Գերմանացի պաշտօնատարներ բերուելուն, մինչև անդամ Գերմանօ-Թուրքական դաշնակցութեան մը դոյութեան վրայ կը պնդէր։ Այս հրատարակութիւնը փարիզի թերթերուն ծանր դալով, դիտել կուտան թէ Թուրքիա մերթ Անգլիոյ դաշնակցութիւնը կը փնտռէ, մերթ իւր մահացու թշնամւոյն՝ այն է Ռուսիոյ դաշնակցութեան հետաձեւա կը լինի, այժմ ևս Գերմանիոյ դաշնակցութիւնը կը հայցէ, որ թերևս աւելի օգտակար չպիտի լինի, նկատելով որ Գերմանիոյ պաշտպանութեամբ Աւստրիա Պոսնիան և Հերսէքը դրաւեց, և աւելի յառաջանալու աչք անկած է։ Փոխանակ այսպիսի դաշնակցութեանց եռանէ նայելու, որք աւելի վնասակար են, միթէ նախամեծար չէ՞, կը յարեն Դաղղիական թերթերը, ներքին բարենորոգումները գործադրել, այնչափ անդամ խոստացեալ և յետաձգեալ։ Բայց Դաղղիական թերթերը կը մոռնան թէ "բարենորոգում" բառն Եւրոպական գաղափար մ'է միայն։ Թերեմ-մանը-Հայ լիգաթ անդամ մ'ըսած էր որ եթէ Թուրքիոյ համար ընտրելի բարենորոգում մը կրնայ լինել, այն ալ Սուլթան Սէլիմի ժամանակուան Օսմանեան մեծութիւնն ու տիրապետութիւնը վերակենդանացնելն է։ Այս նկատմամբ բարենորոգում ի գործ դնելը՝ փոխոխեալ ժամանակաց պատճառաւ դժուարին եթէ ոչ անկարելի լինելով, Եւրոպական տէրութիւնք իրենց տեսակէտովբարենորոգումներ կը յանձնարարեն։ Բայց որպէս զի այս խորհուրդներուն արդիւնքը կրնայ հասկցուիլ, պէտք է յիշել անցեալները մեռնող Լորա Սիթրաթֆորա Տը Ռէտքլիֆի կենսագրութեան մի կարևոր կէտը, զոր Անգղիական թերթերու մէջ կը գտնենք։ Ինչպէս յայտնի է, յիշեալ նշանաւոր դիւանագէտն երկար ժամանակ Անգղիոյ տէրութեան կ. Պոլսոյ դեսպանի պաշտօնը վարած էր, արժանայիշատակ Սուլթան Ապդիլ-Մէճիտի օրով, այն բարեբարոյ վեհապետին, ներկայ ինքնակալին հօրը, որ Թանզիմաթը հաստատեց աւելի մեծ դժուարութեանց մէջ։ Լորա Սիթրաթֆորա Տը Ռէտքլիֆ անձնապէս Ռուսիոյ Նիքոլա կայսեր անհաճոյ եղած էր, վասն զի նորա քաղաքականութեան դէմ կը մաքառէր միշտ, և Գրիմի պատերազմն ալ մեծապէս նպաստած էր։ ուստի թէ՛ վեհ. Սուլթանին քով և թէ՛ Բ. Դրան առջև ազդեցութիւնը խիստ մեծ էր։ այսու ամենայնիւ Անգղիական թերթերը կը խոստովանին թէ Լորա Սիթրաթֆորա չէր կրցած յաջողել իւր խնդրած բարենորոգումներն ի գործ դնել տալու, և եթէ Թուրքիա նորէն յարձակմանց առարկայ եղաւ Ռուսիոյ կողմէն, առանց Եւրոպայէն պաշտպանութիւն գտնելու, յանցանքը նմա չվերագրելիր։

Ահաւասիկ պատմական դէպք մը, որ բարենորոգմանց մասին կը բնայ գաղափար մ'ընծայել։ բայց Թուրքիա պարզապէս բարենորոգում մը չդործադրելու նպատակաւ չդիմադրեր։ Անգղիական թերթ մը կը պատմէր թէ մօտերս վեհ. Սուլթանը բարենորոգմանց խորհուրդ ասող նախարարի մը հետ խօսակցելով, ըսած է թէ ընդունայն է կարծել թէ Թուրքիա բարենորոգում ի գործ դնելով կրնայ օտար պահանջումներէ ազատիլ, վասն զի երբ մի բարենորոգում գործադրի, աւելի ծանր պահանջ մը պիտի ծագի։ Զեմք գիտեր թէ արդեօք այս խօսքերը վաւերական են, բայց տեսութիւնը կրնայ ճըշմարիտ լինիլ։ Նոյն իսկ Գերմանացի պաշտօնատարաց մասին, որք մեր պաշտօնակցաց ոմանց Արևելեան երևակայութեան այնչափ շլացուցիչ պատկերներ կը ներկայեն, Գերմանական թերթերու մէջ ուրիշ տեսակէտով կը խօսուի։ Ասոնք Գերմանացի պաշտօնատարներն Արևելիս մէջ Գերմանական քաղաքակրթութեան առաջնորդները կը համարին, և կը յայտարարեն թէ Գերմանիոյ պաշտօնին կատարման պիտի ծառայեն։ Դժբաղդաբար, այժմեան դիւանագիտաց բերնին մէջ քաղաքակրթութիւն տարածելու "պաշտօն (ֆոնֆ) կատարել" խօսքերը շատ անդամ ուրիշ բան չեն նշանակեր բայց եթէ ռամիկ ժամանակներու անկեղծութեամբ կոչած "երկրակալութիւնն"։ Այսու ամենայնիւ տարակոյս չկայ որ ասոնք տակաւին զուտ խօսք են։

"ՀԱՅՔ ԸՍՏ ԴԱՏՈՂՈՒԹԵԱՆ ՕՏԱՐԱՆԱՑԻՑ"

(Շար. և վերջ)

Պ. Ճ. Պրիմ, Աբեղեան Հնդկաստանի Անգլիական Պապասրբան Ընկերութեան Տարեգրութեան մէջ (հատ. Գ. էջ 88) հետևեալ հատուածները կը գրէ, զորս Պ. Ճ. Միլ կ'ընդօրինակէ իւր Պատմութիւն Բրիտանական Հնդկաստանի կոչուած գրքին մէջ, (հատ. Ա. էջ 88-89. — 1858).

"Արևելեան Քրիստոնէից մէջ, Հայք, կոսդանդինոսի յաջորդաց ժամանակ, առանձին ազանդ մը կազմած էին։ Երբ այն երկիրներն, ուր նոքա կը բնակէին, իսլամական բանակաց կողմանէ գրաւեցան, անոնցմէ շատեր բռնի զօրութեամբ Պարսկաստան գրկուեցան, կամ շրջակայ երկիրներու մէջ ցիր ու ցան եղան։ Հարստահարութեան ներքև, Հայք իրենց հաւատքը պահեցին, և իրենք զիրենք վաճառականութեան տալով, Եւրոպայի Հրէից պէս, վաճառականներ և միջնորդներ եղան այն զանազան երկիրներու մէջ, ուր բաղդը տարած էր զիրենք։

"Հայոցմէ մի մասն ալ Հնդկաստան դնացին, և իրենց սովորական ճարտարութեամբ և աշխատասիրութեամբ, երկրին առևտրական գործոց մէջ այն բաժինն ստացան, որ իրենց արտայայտած հանգամանաց բնական վարձատրութիւնն էր։

"Այս միջոցիս (1689-1698 ին), Հնդկաստանի Անգղիական Ընկերութիւնը դրամական նեղութեան մէջ էր, և առանց ազնտալի հետևանաց, չէր կրնար մեծամեծ ծախիւք գործ տեսնել. ուստի, Տնօրէնները պարտաւորեցան Ընկերութեան առևտուրն ամենէն խնայողական միջոցներով կատարել տալ։ Հետևարար հրահանգ տուին, որ փոխանակ Եւրոպացի գործակատարներ աւելցնելու Հնդկաստանի մէջ, ընտիկներ, և մանաւորապէս Հայեր գործածուին. "զի այդ մարդիկ "կրնան Անգղիոյ լրագրները վարդումարի. յայնժամ Տնօրէն Ժողովը շաբաթը մէկ նիստ ընելով կրնայ բաւականանալ։" Այս բանաւոր առաջարկութիւնն է. ես ալ համամիտ եմ այս մասին անոր։ Միացեալ ընկերութիւնն ունենալու է գաստիարակուած, վարչական կարողութիւն ունեցող, միանդամայն բարի անուան տէր,—միով բանիւ, լաւ գլխու և լաւ սրտի տէր անձ մը իբր Տնօրէն։ Այս անձը թոշակ ունենալու է, և թոշակը համաձայնելու է իւր պատասխանատու պաշտօնին և թէ ընկերութեան գանձու վիճակին։ Նա հոգ ունենալու չէ իւր ապրուստին համար, ոչ ալ արտօնութիւն ունենալու է ընկերութեան գործէն դուրս դործ բռնել. իր բոլոր ժամանակը և տաղանդը նուիրելու է ընկերութեան և միայն ընկերութեան գործերուն, անշուշտ պատասխանատու ըլլալով ժողովի մը։ Ամերիկեան Պորտը քանի մը անձանցմէ դոյութիւն առաւ, և իրը յիսուն տարուան մէջ ընդարձակուեցաւ, անանկ որ աշխարհիս ամեն կողմը գործ բռնած է. միայն Թուրքիոյ մէջ տարին քառասուն հազար Օսմանեան լիրա ծախս կ'ընէ։ Տասն և եօթը վաճառականք շաբաթը մէկ կամ աւելի անդամ կը հաւաքուին, և Տնօրէնը, կամ ինչպէսիրենք կ'անուանեն, Դլխաւոր ֆարտուզարը ըլլալիք գործերը կը ներկայացնէ նոցա, որք կը քննեն, կը վիճաբանեն և քուէի առաւելութեամբ կ'որոշեն։ Տնօրէնը պատասխանելու է ամեն հարցման համառօտ և իմաստալի սեռով. ժողովը լմնցաւ. Տնօրէնը կամ ֆարտուզարը կը թղթակցի կը կարդաղըրէ և կը լատարէ։ Տնօրէնին գործը ծանր է. պաշտօնը պատասխանատուութիւն ունեցող պաշտօն է. լաւ ամսական կընդունի, և բոլոր ժամանակը նուիրած է Պորտի գործին։ Պորտի ընկերութեան ամեն մէկ ճիւղերուն վրայ մանրամասն տեղեկութիւն կրնայ տալ. դրքի պէս կը խօսի. կենդանի պատմութիւնն է Պորտի գործերուն. այսպիսի անձ մը մեծ արժէք ունի իրը Տնօրէն. բայց նա այնպէս եղած է, իր ընտանեկան անհրաժեշտ եղած ժամանակէն դատ, բոլոր ժամանակը և մտաւոր կարողութիւնը նուիրելով Պորտի ծառայութեանը։ Պորտին կամ ընկերութեան յաւէտ իրնայողութիւն է լաւ ամսական մը վճարելով այսպիսի անձ մը ունենալ իր գործերուն ղլուխը. խնայողութիւն չէ օրն ի բուն իր ապրուստին զբաղած և մտքով ու մարմնով յոգնած մէկ կամ աւելի անձանց աւելորդ ժամանակովը ընկերութեան գործերը կարդադրել և կատարել։ Այսպէս ընկերութեան գործերը թերի կըլլան, և գոհացուցիչ չէ։ Անգլիացիք զրոյց մը ունին, որուն միտքը սա է թէ բան մը կամ բնաւ ընելու չէ, կամ կատարեալ ընելու է։ Այս իմաստուն խորհուրդ է. ինչ որ շիտակ է Անգլիացւոց համար, շիտակ է նաև. Հայոց համար, շիտակ է նաև այս ընկերութեան համար։ Դարձեալ կըսեմ մարդիկ ըզբաղած են իրենցմէ կախում ունեցող սիրելիներուն հացը հայթայթելու. անոնց տալեցած ժամանակովը ընկերութեան գործերն ընելը հարկաւորապէս քիչ և թերի կըլլայ։ Այսպէս ընելը շիտակ չէ, շահաւոր չէ և ընկերութեան ստակ տուող անձանց բաղձանացը համաձայն չէ։ Ընկերութիւնը երկու սրոշ գործեր ունի. առաջին, պաշտօնեաներ ընտրել և միջոցներ դտնել ստակ հաւաքելու. երկրորդ, հաւաքուած ստակները, խնայողութեամբ և օգտակար կերպով, նուիրատուաց նը-պատակին ծառայեցնել։ Այս գործը տարանդ և գործունէութիւն կը պահանջէ։ Ադգը գործ կուզէ. իրեն ձեռք չի տար ժամանակ կորսընցնել. Բայց էշ ֆէյ (ժամանակը դրամ է.) ժամանակը արժէք ունի, քաղաքականապէս թէ ընկերական. արդէն չորս հարիւր տարի ուշ մնացած ենք, մէկ օր մ'ալ չենք կրնար կորսնցնել. գործ կ'ուզենք — շուտ և արագ։ Դարձեալ նկատելու ենք քաղաքականապէս մեր արդի փափուկ վիճակը. երբ չորս հարիւր տարի է որ մենք և քաղաքակրթեալ ազդերը միմեանց անծանօթ էինք. այսօր անոնց ուշադրութիւնը կը դրաւենք. Հայկական խնդիր մը կայ այսօր, որուն լուծումը կապակցութիւն ունի որչափ մեր Թագին նոյնչափ մեր դասակարգութեանը հետ։ Մեծն Բրիտանական կառավարութիւնը յայտարարեց թէ Հայոց թիւը ստուգելու համար աշխարհահամար պիտի ընէ. նոյն բանը կը լսուի Բրուսիոյ կառավարութեան համար։ Միթէ հաւանակա՞ն է թէ այս բազմաձախս և բազմաշխատ ձեռնարկին մէջ սոսկ մեր թիւը նշանակելով նոքա բաւականանան։ Մօտերս Լոնտարայի մէջ հրապարակական ժողով մ'եղաւ ի նպաստ Յունաց, և ատենաբաններէն մին, Թրաւալիեան անուն, Յունաց համար ըսաւ թէ, "ժողովուրդ մը որ մինչդեռ դէն ի ձեռին ազատութեանը համար կը պատերազմէր, իւր մանկունքը վերաններու տակ կը դասաւորակէր։" Այս խօսքերը ըսաւ նա ցուցնելու համար թէ Յոյնք դասաւորակութիւնը սիրող ըլլալուն իրենց համակրութեանը արժանի են. միթէ չմ՞ ցուցներ միանդամայն թէ քաղաքակրթուելու և բարձրանալու բաղձանք ունեցող ժողովրդոյ մէջ դասաւորակութեանդանքերուն վերայ Անգլիացիք օ՛րչափ յարդ կը դնեն։ Անգլիացիք նկատողութեան պիտի առնեն մեր դպրոցներուն և աշակերտներուն թիւը, երկու սեռինը ուրոյն ուրոյն. վճարած դումարը, միով բանիւ զմեզ պիտի դատեն դասաւորակուելու մեր ջանքերէն ու ճիգերէն։ Արդ, օ՛րչափ կարևոր է որ նոքա դտնեն մեր մէջ զօրաւոր ընկերութիւն մը, որ Հայուն ազգայ սերունդին առաւելագոյն դասաւորակութիւն տալու նուիրական գործով զբաղած է. այսպէս կըլլայ, յորժամ ընկերութեան դլուխը բանիւռուն և գործունեայ Տնօրէն մը կենայ։ Բօպէրթեան ճեմարանի հիմնադիր Պ. Բոպէրթի մահուան դաժը յորժամ հասաւ քաղաքս, յաջորդ կիրակի օրը, ճեմարանին նախագահը սովորական քարոզին տեղ՝ հանդուցեալին կենսագրութիւնն ըրաւ, և ի մէջ այլոց ըսաւ թէ Ամերիկայի մէջ չոգեկառքի ընկերութիւն մը գրեթէ կործանման վիճակի հասած էր, բաժինները գրեթէ անարժէք կըլլային։ Այս վիճակին մէջ Պ. Բոպէրթ նախագահ ընտրուեցաւ նոյն ընկերութեան. քիչ առնէն ընկերութիւնը զարգացաւ, և բաժիններն եղան անոնց տիրոջ հանք հաբըստութեան.—Պ. Բոպէրթ նախագահ ընտրելովը չոգեկառքի ընկերութիւնը իմաստութիւն ցուցուց։ Պ. Բոպէրթ ունէր երկու յատկութիւնք.—վարչական կարողութիւն և հաւատարմութիւն,—իւր անձնական պիտոյիցը համար թերթ մը թուղթ նա չէր գործածէր ընկերութեան թղթերէն։

Այս իրողութիւնը կը ցուցնէ որ ընդհանուր Տնօրէն կամ նախագահ մը ընտրելը ընկերութեանց սովորութիւն է, պէտք է. երկրորդ, կարող միանդամայն Աստուածավախ մարդ մը կրնայ ընկերութիւն մը; — առևտրական թէ մարդասիրական, — զարգացնել և զօրացնել մինչև իսկ կործանման վիճակի հասած ըլլայ։ Այս պատմութենէն սորվելու դաս մը չկա՞յ մեզի Միացեալ ընկերութեան նկատմամբ։ Ո՞չ ապաքէն իմաստութիւն է հետևիլ անոնց օրինակին։

Ճ. Կ. Մինչին անուն անուն Անգլիացի մը տեսեալ տարի ճամբորդութիւն ըրաւ ի Պուլկարիա, յորժամ գիւղի մը դպրոցը մտաւ ուր Պոհեմիացի վարժապետ մը կուսուցանէր, հարցուց վարժապետին «Պուլկար պատանիք ուշիմ են»։ վարժապետը պատասխանեց «ոչ, բայց կը բաղձան ուշիմ ըլլալ»։ Մինչին կըսէ թէ յորժամ կը յիշենք Անգլիոյ և Գերմանիոյ երկու երևելի բանաստեղծաց սա խօսքը «մարդ ինչ որ կամի կրնայ ընել», չեմ կարծեր թէ ժողովուրդի մը համար իր վիճակէն բարձր վիճակ

մը ունենալ կը բաղձան ընելէն լաւագոյն գովեստանք մը կրնայ ըլլալ։ Մինչեւի գաղափարն ուղիղ է։ Անդրկիսցիք և Բրուսիացիք յորժամ շրջագային մեր հայրենիքը, պիտի դանեն թէ մենք հարիւրին մէկը չափաւոր դատաբակեալ է։ և քանզի մէկը կրնայ ընթեռնուլ միով բանիւ մենք ազէտ ժողովուրդ ենք։ Այս յաւալի իրողութիւն է։ և աշխարհի առջեւ խոնարհելով այս իրողութիւնը ճանչնալ և ընդունելու ենք։ բայց ազգէտ ըլլալը ամօթ չէ, գիտուն ըլլալ չուզելը ամօթ է։ մեր ազգութիւնը մեր յանցանքը չէ։ մեր դժբաղդութիւնն է։ իրը չորս հարիւր տարի է օտար իշխանութեան հպատակ ենք, այս իրողութիւնը զմեզ անբաւիր կընէ։ Այսօր դատապարակուելու մէջ անտարբեր ըլլալ, մինչեւ իսկ թուլ և ծանրաքայլ ըլլալ՝ ամեն ջանք և ճիգ ի դարձ չի դնել, մեզ յանցաւոր կընէ։ բանով մը բանով մը չենք կրնար արդարանալ։

Մայրաքաղաքիս մէջ դատապարակութեան նպատակով, կարող ցնորբէնի մը վարչութեամբ ժամացոյցի պէս կանոնաւոր գործող ընկերութիւն մը, որ արդէն քանի դպրոցներ բացած է և օր ըստ օրէ տասնց թիւն աւելցնելու մտադիր է, և ամեն քաղաք և գիւղ նման նպատակով ընկերութեանց գոյութիւնը Անգլիացւոց խորհել պիտի տան։ — ժողովուրդ մը որ ոգէտ է, բայց սովէ, պարտադանց պաշտօնէիցմէ, մնչեռանդ դրացիներէ կը տառապի, բայց դեռ իր դաւակները դատապարակելու ջանք և ճիգ կընէ։ միով բանիւ «Հայք ոգէտ են բայց գիտուն ըլլալ կուզեն։» Այս մեր վարկը պիտի աւելցնէ։

Հայ։ գրագ. Հ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կարին 20 Օգոստ. 1880

• • • Խմբագրատան

Գաւառական նորակազմ Բաւմնական խորհրդոյ պատրաստած դպրոցական ծրագրին գործադրութեան հարկաւոր եղած 2100 ոսկիի գումարն ազգային արոյ և կամ թաշակի դրութեամբ հաւաքելու համար՝ դաւառիս Ընդհ. ժողովը երէկ նոր ընտրեալ առաջնորդին ժամանելէն ի վեր այս առաջին անգամ բացուեցաւ Գեր. Հ. Օրմանեանի մէկ իմաստալից բանախօսութեամբ, որոյ մի օրինակն ձեռք բերելով ներփակած եմ, զոր եթէ արժան դատիք կ'հրատարակէք։ Բաւական ջերմ վիճաբանութիւններէ յետոյ 2100 ոսկիի գումարը միաձայն հաւանութեամբ երեսփոխանութենէն ընդունուեցաւ։ իսկ այս գումարէն այն մասն՝ որ ազգային արբ.օք կամ թաշակով պիտի լեցուի։ ինչ միջոցաւ ձեռք բերելու խնդիրը յաջորդ նիստին թողուեցաւ, որ պիտի գումարի յառաջիկայ ուրբաթի։

* * *

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԳԵՐ. Տ. ՕՐՄԱՆԵԱՆԻ

Տեառք Երեսփոխանք.

Առաջին բաղձանքներս և թերեւս առաջին պարտքերս մնէր համախմբել զԱրժ. Հարոյ. և զՄեծ. Տեարդ որք ժողովրդական քուէիւ ընտրեալ կը ներկայանէք օրինաւորապէս Աստուածապահ քաղաքիս և տիրանամ վիճակիս բովանդակութիւնը, որք և Ձեր քըուէիւքը հաճեցաք պարտք մը դընել իմ վրաս՝ կոչելով զիս առաջնորդել գաւառիս։

Եթէ կայր ոք որ իւր անձնական պարագայները ճանաչելով պէտք էր զինքն հեռի նկատէր այսպիսի պաշտօններէ, նա ալ ես էի, որով և ոչ սակաւ շուարեցայ երբ զառաջինն չշուկն և անսորոշ խօսակցութիւնք իմացուցին ինձ թէ այսպիսի գաղափար մը եկեր է ի լոյս։ Շշուկն իրականացաւ։ գաղափարն արդիւնաւորեցաւ։ ընտրութիւնը կատարուեցաւ։ ազգային իշխանութիւնը վաւերացաւ։ Պետական Գաւազն ալ հասատաւեց և ես անհակառակ զբաղութիւնս խոնարհեցուցի։ հաւատալով այն սկզբան զոր զբեթէ 'ի մանկութենէ ինձ կանոն եմ ընտրած, ա'չ պաշտօնի հետամտել։ ա'չ պաշտօնէ խուսափիլ։ քանի որ անգործ մնալն օրինաւոր և հնարաւոր չէ։ լաւագոյն է անտալ ձայնին Աստուծոյ, որ երբեմն կը յայտնուի ձայնիւ ժողովրդեան և երբեմն ձայնիւ մեծաւորաց։ բայց՝ տարահոսագոյն էս երբ երկու ձայները կը ձայնակցին։

Այդ ձայնակցութեան հնազանդ և հպատակ ահաւասիկ ես 'ի մէջ ձեր։ թերեւս վաղագոյն ես հարկ էր երախտագիտական շնորհակալիս յայտնել այն պատուասիրութեան և այն մեծարանաց հաւատաւոր համար զոր ցուցիք դուք ինձ Ձեր ընտրողական քուէիւք։ և որով կամեցայք բարձրացնել դիս յաթոռ Առաջնորդական մեծի վիճակիս Բարձը Հայոց։ այլ ներեցէք որ եթէ ոչ խոպառ՝ գոնէ մեծաւ մասամբ կարճեմ բացատրութիւններս։ որովհետեւ չեմ կարող երբէք կարծել թէ դուք Ձեր ընտրութեամբ նկատած ըլլայք անձ մը պատուասիրել, զայդ ենթադրելով զՁեզ մեղադրած կըլլամ։ այլ նկատեցէք դուք ի հարկէ տեղական պիտոյից համար գործակից մի եւս տուելոյնել Ձեզ, և Հայաստանի ծառայութեան սպասաւոր մի եւս կոչել։ Այս տեսութեան ներքեւ շնորհապարտ և շնորհակալ եմ Ձեզ և Ձեօք բովանդակ ժողովրդեանս, որ քանիցս ազգին համար պէտք էր գործէի ամեն տեղ և ամէն առեն, դուք ինձ իմ բաղձանացս համաձայն առպարէզ մը բացիք և Հայրենական հողին տեսոյն և նորա անմիջական սպասաւորութեան արժանի ըլլիք զիս։ Իմ շնորհապարտութեանս արդիւնաւոր նշանը իմ աշխատանքս պիտ՝ ըլլայ, զոր կը պահանջէք դուք յինէն, և զոր ցուցնելու ջանալ եմ սկսած, և միայն կը հայցեմ ի Տեառնէ անսայթաք յաջաւելել։

Ընդունեցէք, Տեարք Երեսփոխանք, բովանդակ վիճակիս ներկայացուցիչք, ընդունեցէք անկեղծ զգացմանցս արտայայտութիւնը։

Այդչափ էր ըսելիքս և այս միայն ըսելու համար հարկ չտեսնցի առանձինն դաւմարման մը հրաւիրել զՁեզ։ մանաւանդ որ, ըստ Ձեր ներքին կանոնագրութեան, փակեալ էր տարեկան նիստերու շրջանը, և կ'սպասէի որ կարեւոր և ընդհանրութեան օգուտը դիտող խընդիր մը արտաքոյ կարգի դաւմարման մը պէտքը արդարացնէր։ Աւուրքս նաեւ օրակարգը խօսքս կը հատատէ։

Սահմանադրական օրէնքը մեծ դեր մը սահմանած է, երեսփոխան Տեարք, Ձեր պատկառելի ակմբին։ երբ զի ինչ որ կը գործուի դատարանի մէջ ի վարչական մասին, Ձեր քաւէիւ ակիզբն կ'առնու և Ձեր կարծեաց կ'ենթարկի, օրէնսդիր էք դուք, և ընտրող և համարառու։ և իմ հատատ դիտաւորութիւնն է որ Ձեր ժողովրդի իրաւունքը և ծանրակշռութիւնը պահպանի յիւրում լրման, և Ձեր գործունէութեան ալ ասպարէզը անբռնաբարելի մնայ, ինչպէս Սահմանադրութիւնը կ'օրէնսդրէ և ներքին կանոնագրութիւնը կը բարեկարգէ։ Ըստ այսմ ալ պէտք է որ Ձեր տարեկան նիստերը տեղի ունենան ըստ օրինի։

Իսկ Ձեզ, Երեսփոխան Տեա'ք, պէտք չէ այնպէս կարծել թէ բոլորովին իսկ ազդեցութենէ զուրկ պաշտօն մին է՝ զոր կը վարէք։ այլ Ձեր պաշտաման պատիւը և յարգը դուք առաջին պէտք է ճանչնաք և ճանչնալիդ ցուցնէք, զրաղելով Ձեր պաշտաման ոչ միայն անսագիւտ ներկայութեամբ և անսաերիւբ փութաջանութեամբ, այլ և մտածելով և խոկալով երբայ վիճակը, Ձեր առաջարկութիւնները բերելով դիւանին սեղանոյն վրայ, և եղեալ առաջարկութեանց նպատակը և օգտակարութիւնը կշռագատելով։ Ներկայ ժամանակս մէջ, ոչ թէ մտածել և երեւակայէն է՝ որ կը պակսի մեզ, այլ գործադրելը և իրականացնելը։ և դուք ալ պէտք է դիտայք և համոզուիք թէ մոռնակից է՝ այն պատասխանատուութեան՝ զոյ ներքեւ կ'իյնան Ազգային իշխանութիւնք դժուարութիւնները դիւրացնելու մասին։

Երբ մերձաւոր նայիմ ներին մեր տարեկան և տարեսկան նիստերուն շրջանը բացուի, այն տանն պիտի ներկայանամ Ձեզ, գործակցութիւնս վարչական ժողովոյ, այնպիսի որոշմանագրութիւններ, որք Հայաստանի բնակչաց և աշխարհին յառաջդիմութիւնը կը գիտեն, և որք կարեւոր են, որպէս զի Հայաստան բարձրանայ այն աստիճանին՝ յորում կը պահանջեն դնա՝ մեր և բոլոր Հայաստանցի և աչ Հայաստանցի Հայոց ջերմ իղձերը։ Դուք որ յընդհանուրս հաչակեալ ծրագրոյն հեղինակ կանդնեցայք, ղդայիք այսու Ձեր պաշտաման բարձրութիւնը և նորանոր պարտքերը, ապագային մէջ ալ բաւ է ինձ խնդրել 'ի Ձենէ անցեալոյն շարունակութիւնը։

Այսօր Ձեր պատուարժան Բաղժողովն կը խնդրէ 'ի Ձենէ, մերսիս հաւանութեամբ, որ դաւառական արկղը սահմանադրական ոճոյն յարմարի։ եթէ ցարդ հին ոճը հատատուն էր պահուելը, կամ թէ շատ և շատ առաջնորդութիւններ ալ չը կարողացան դեռ լիովին գործադրել Յահմանադրական օրինաց և հրահանգաց հրամանները, կարին պարտք ունի ընտրելագունի դիմելը և ինչ որ յապաղեալ է փութալ օր առաջ գործադրել։

Ի մասնս սահմանադրական ոճը ոչ թէ միայն ժողովրդեան վստահութիւնը պիտի աճեցնէ արկղական գործոնութեանց նկատմամբ, այլ և ներքեւցէք ինձ խոստանիլ, Առաջնորդին տաղտապանքն ալ պիտի նուազեցնէ և թոյլ պիտի տայ նմին իւր բոլոր ուշը և աշխատանքը ժողովրդեան և ընդհանրութեան բարւոյն և պիտոյից և յառաջդիմութեան նուիրել։

Կը խնդրուի եւս Ձեզմէ բարձր հրաման մը և գործաւոր ձեռնտուութիւն մը տալ կարնոյ քաղաքին վարժարանաց յառաջդիմութեան նկատմամբ։ Դաստիարակութեան խնդիրը, վերկութեան խնդիր է։ վերկութեան այն ամէն կերպ կարողութիւններէ և նեղութիւններէ, որոյ դէմ ուժգնակի կը դանդաղիմք այսօր։ Գալէս ի վեր, ինչպէս և դուք կրնաք վկայել, հանդարտութեամբ և առանց յուցամոլութեան շատպանաց քննել ջանայի կարնոյ դաստիարակութեան վիճակը։ Եթէ կարին կամենայ պարծենալ թէ իւր դաստիարակութեան վիճակը ուրիշ Հայաստանի քաղաքներէն ընտրելագոյն է, ես չեմ կարող իւր պարծանքը հաստատել՝ ցորչափ չեմ ճանչցած ի մօտոյ ուրիշ քաղաքաց վիճակը։ Եթէ կարին կամենայ յառաջ 'բերել այն դումարը՝ զոր յաղգային հաստատութիւն դաստիարակութեան համար կը ծախսէ, ես չեմ կարող պատասխանել թէ այս ոչինչ է։ Եթէ կարին կամենայ յիշել աշակերտաց և աշակերտուհեաց թիւը՝ որք իւր հինգ վարժարանները կը յաճախեն, ես չեմ կարող անարդել անոնց թիւը և անկիրթ թողուած կարծել կարնեցի մանկութիւնը։ բայց ներսուի ինձ յայտնապէս խօսել թէ կարնոյ դաստիարակութեան վիճակը ժամանակիս պահանջմունքները չգոհացներ։ կարնոյ ծախսած դումարը մատնաւորաց ընելու օժանդակութեան պէտքը չբաւնար և մատնաւորները պատասխանատուութենէ չազատեր։ կարնոյ աշակերտաց մանկութեան թիւը, կարնոյ մանկութեան բովանդակութիւնը չներկայացներ։

Պէտք է մեզ այնպէս պատրաստել՝ որ և ոչ մանուկ մը դուրս մընայ։ պէտք է մեզ այնպիսի դաստիարակութիւն տալ՝ որ դարուս յառաջդիմութեան համապատասխանէ, ազգային զարգացման նպաստէ և նորահաստատ ոճերու յարմարի։ Հասարակաց արկղէն ծախսեալ գումարը թէպէտեւ հարկաւոր եղած դպրոցական գործիքներ ունենայ, հարիւր թէ կարեւորին կէսը կը ներկայացնէ։ ցորչափ հարկ է ամենայն ինչ անապատարար կատարել և այնչափ և այնպիսի դաստաուներ ունենալ՝ որք իրաւունք կրթութեան հեղինակ կարնան լինիլ։ Դաստիարակութեան նոր պէտքերը զգալով քաղաքացիքդ նորաշէն վարժարան մը ալ աւելցուցիք, այլ պատերուն և շինութեան ծախքը նուազ է յոյժ դաստաուաց և ուրիշ ուսումնական պիտոյից համար ըլլալիք ծախուց քով։ Ձեկոյ քաղաք մը կամ տեղ մը՝ ուր բոլոր դաստիարակութեան բեռը հասարակաց արկղ հաստատեալ վրայ ծանրանայ, և կարոյն ու անկարոյն ունեւորն ու չքաւորն հաւասարապէս կարօտելոյ ի նպաստ սահմանեալ եկամուտներէն օգտին։

Արդարութիւն և իրաւունք, պատշաճաւորութիւն և վայելչութիւն կը հրաւիրեն զմտանաւորս՝ որ դաստիարակութեան ծախուց մասնակցին այն կերպով, որ ըստ տեղւոյ և ըստ քաղաքայ յարմարագոյն կը դատուի, և դիւրագործագրելի կ'ըմբռնուի կամ ի փորձառութենէ կը հաստատուի։

Աղդ. վարչութիւնն այդ խընդրոյն լուծումը երկուց զանազան մարմնոց յանձնեց։ Ուսումն. խորհրդոյ մը և Հաշուեչափի յանձնաժողովոյ մը, երկուքն թէպէտ խորհրդակցութեամբ գործելով, բայց բաժանաբար իրենց ծրագիրները ներկայացուցին և վարչութիւնն ալ նոցա ծրագիրը ընդունելով և իւր կարծիքն ալ վրան աւելցնելով, այսօր բոլորն միանգամայն Ձեր ուշադրութեան կը բերէ։

Ինչպէս կը տեսնայք, կենսական է խնդիրն, ես առաւել որ ժամանակն իսկ չներեր յապաղել ես։ ամէն վայրկեան որ ընդունայն կ'անցնի, ճնաս մի է, վատնդ մի է։ միւս կողմէն կարծեմ թէ Յանձնաժողովը խորհուրդն և ժողովը դժուարութիւնները բաւական հարթած են ձեր առջեւ։ Այժմ կարնոյ քաղաքն է միայն որ ի նկատ կ'առնուի, բայց դոյնը հոն չպիտի մնայ, նաեւ բոլոր վիճակին մէջ խնդիրը արժանաւոր է մտադրութեան, քաղաքին օրէնքը դիւրօրէից կրնայ օգնել, և նմանօրինակ դրութիւն մը շատով կրնայ հաստատուիլ ամէն տեղ։ Ձեր այս աւուր դումարումը դաւառիս ամենէն դլխաւոր խնդրոյն համար է։ իմ պարտքս է պէտքը ծանուցանել և ոչ բնաւ Ձեր կարծեաց վրայ ազդեցութիւն դործածել։

Պէտքը բացատրեցի, եղանակը Ձեր վստահութեան ներկայացուցիչներդ վարչութիւնը կ'առաջնորդէ։ Ձեր որոշումը պիտի լինի հաստատութեան պէտքը և պիտի պըատակէ ընդհանրութեան բաղձանքը։

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՌՕՏՈՍԹՈՑ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ

(Շար. տես թիւ 2693)

Մեծ. Տեարք	Սրբ. դրկ.
Ռուբէն Շահմի	12
Ազարիա Տէմիրճի	12
Սէմէրճի Սարգիս	12
Կիրակոս Խալիֆա	12
Մ. Աբրահամ Էչիկեան	12
Սահակ Եաղճի	12
Յակոբ Փիլիպոսեան	12
Գասպար Թէմիրեան	12
Գրիգոր Մէչէեան	12
Յարութիւն Ճէպպարեան	12
Մ. Կարապետ Պոյնիկեան	12
Համբարձում Գասպար	12
Բարիթան Յովհաննէս	12
Տիւկէր Ալիքսան	12
Համի Նափթալի	12
Տէրմէնճի Գրիգոր	12
Աստուածատուր Եըլանեան	12
Ազարիա Մալաքեան	12
Նիկողոս Պէլիճեան	11 20
Մ. Թաղէոս Ֆէնճի	11 20
Մանուկ Գալֆեան	11
Գէորգ Գալուստեան	11
Պաքալ Տիրացու Կարապետ	11
Հայրապետ Ներսէսեան	11
Գունտուրճի Սիմոն	11
Մելիքսոն Շապտեան	11
Գէորգ Տատուրեան	11
Յովհաննէս Գարակէօզեան	11
Գէորգ Գուզուքէպազեան	10
Կարապետ Ֆէէհեան	10
Տօղրամաճի Յարութիւն	10
Մ. Յարութիւն Եէկէնեան	10
Զէվիկ Նիկողոս	10
Կարապետ Զօրլուեան	10
Պաքալ Յակոբ	10
Սարգիս Մանկլեան	10
Մ. Յովհաննէս Կիլիկիոսեան	9 20
Մ. Աբրահամ Քուլաճի	8 30
Գասպար Աբրահամ	8
Տօղրամաճի Յովհաննէս	6
Կարապետ Գեղինեան	6
Մովսէս Թէրզի	6
Մ. Կարապետ Պէրպէրեան	6
Գրիգոր Բիւզանդեան	6
Խաչիկի Շաչի Յարութիւն	6
Բուենտուրճի Մ. Կարապետ	6
Պետրոս Գայտէճեան	6
Գէորգ Գաւիթեան	6
Յովհաննէս Մամճեան	6
Աղէկսէեան	6
Սուէօլճի Կարապետ	6
Յովհաննէս Ճաղեան	6
Սարգիս քէօսէ Աբրահամեան	6
Մ. Յովհաննէս Խաչիկի	6
Յարութիւն Բիրբիճճեան	6
Կարապետ Շերբինեան	6
Ստեփան Տիրանեան	6
Մ. Կարապետ	6
Կարապետ Աղաբէրդ	6
Մկրտիչ Խաչիկի	6
Գէորգ Զօրլուցի	6
Պետրոս Սաղբէկեան	6
Մկրտիչ Ֆէսճի	6
Թէրզի Յակոբ Պիբերեան	6
Մ. Կարապետ	6
Յովհաննէս Տօղրամաճի	6
» Փափազեան	6
Մ. Ղազարոս Եէմէնիճի	6
Մինաս Մկրտեան Պոյաճի	6
Մանուկ Գուլնտուրճի	6
Աւիտիս Բիլաճեան	6
Կարապետ Երամեան	6
Յովհաննէս Վրթանէս	6
Մ. Թադէոս	6
Թադէոս Գալբատեան	6
Յովհաննէս Աստուածատուր	6
Միքայել Արզարեան	6
Պապիրկեան Թորոս	6
Թէրզի Յարութիւն	6
Նահապետ Թէնէքէճի	6
Ստեփան Բէօսէէճի	6
Մաքինաճի Յակոբ	6
Գէորգ Փափազեան	6
Մկրտիչ Մաքինաճի	6
Յարութիւն Պասմաճեան	6
Կարապետ Ահէմ Մելքոնեան	6
Գարբուղեան	6
Խաչիկի Գարբուղեան	6
Գրիգոր Ֆիտանեան	6
Վարդան Զօրլուցի	6
Խաչիկի Յարութիւն	6
Մ. Պօղոս	6
Գասպար Գէորգ	6
Բիւլանճի Յակոբ	6
Պօղոս Բիւչիկ	6
Յակոբ	6 30
Պաքալ Մարտիրոս	6
Գասպար Մովսէս	6
Եղիա Շապտի	6
Տօղրամաճի Մարտիրոս	6
Քալիպճի Յակոբ	6
» Յովհաննէս	6
Գէորգ Փափազեան	6
Պաքալ Զաքար Թաշճան	6
Եէմէնիճի Վարդան	6
Էքմէքճի Յակոբ	6
Թաշճի Յովհաննէս	6
Յովսէփ Էմինեան	6
Գէորգ Փաչաճեան	6
Գարբիել	6
Տօղրամաճի Յակոբ	6
Բըլտուզ Սիմոն	6
Միքայել Շապտի	6
Մելքոն Ինճէ պաճաղ	6
Մ. Կարապետ Գալանճի	6
Տօնապետ Աբրահամեան	6
Աստուածատուր Բրիստոսատուրեան	6
Մանուկ Գարամա	6
Մ. Կարապետ Մխիթարեան	5 30
Մ. Յարութիւն Յովհաննէսեան	5 20
Ֆէճճի Կիրակոս	5 20
Գրիգոր Եղբայր	5 20
Պաղտասար Տէլի Կիւմէյի	5 20
Գարբիել	5 20
Միքայել	5 20
Կարապետ ամ. Համալի	5 20
Յակոբ Կիւրճեան	5 20
Եսայի Խաչիկի	5 20
Գէորգ Պուզանեան	5 20
Նշան Սաղբէկեան	5 20
Պաքալ Մ. Խաչատուր	5 20
Սարգիս Զօրլուցի	5
Կարապետ Թամեան	5
» Էմիրզեան	5
Գէորգ Գարամանի	5
Գունտուրճի Կարապետ	5
Յարութիւն Գալէնքեարեան	5
Ստեփան Նէվրուզեան	5

(Շարունակելի)

Les annonces pour la France, l'Angleterre, l'Allemagne, l'Autriche-Hongrie, la Belgique, la Suisse et l'Amériquesont exclusivement reçues par la *Compagnie Générale de Publicité Etrangères G. L. DAUBE et Cie*, à Paris, Londres, Berlin, Vienne, Francfort, Zurich, etc.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պ. Նարոյը Բիւ զանդայուն Գաղղիերէնէ Հայերէն ընդարձակ բառարանին տպագրութիւնն սկսած է և արդէն մինչև տասներեքերորդ թերթն հրատարակուած։ Առ այժմ կանոնաւոր կերպով չորեքշաբթի մէկ թերթ կ'ելնէ, քանի մը շաբաթ յետոյ երկու թերթ ելնել պիտի սկսի։ Նոքա որք բաժանորդ չեն գրուած և չեն կրնար մի անգամ մէկ ուրեմն սակի վճարել, կրնան թերթ առ թերթ դնել, որ 60 փարա է։

Գլխաւոր մեներանոցն է Ֆրէնկեան գրատաճառանոցը, կը գտնուի նաև ամեն Հայ գրատաճառաց քով։ Արշակ Լ. Ֆրէնկեան թղթավաճառանոցն ի Գալաթիա։

ՊՏՈՅՏ ՄԸ
ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒ ՄԷՋ
ԳՐԵՑ

Ց. Ց. Գաբանեան

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

Ս. Գ. Պարսիզպանեան

Կ. Պոլսոյ թաղերու աղդայնոց բարքը, սովորութիւններն և ընկերական կեանքը, նոյնպէս և վարժարանաց վիճակը նկարագրող զաւեշտական հետաքրքրաշարժ գործ մ'է, որ տեսար առ տեսար սկսած է հրատարակիլ։

Այն գործոյն ուժերորդ տեսարն արդէն ապագրուած և շրջաբերութեան հանուած ըլլալով՝ կը ծախուի լրագրավաճառաց քով, Ս. Ղուկասեան և Ֆրէնկեան գրատունը և Սուճի Պօղոս ազգի խանութը ի գին 40 փարայ։

ՍԿԶԲՈՒՆՔ
ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ
ՅՕՐԻՆԵԱԼ

Ի Հերոդոտոսէ Բարենէնց

Երկրաչափ—Անատաւոպեա և Նոսկին աշակերտ Կայսերական ուսումնարանի անտառաց։

Կ. ՊՕԼԻՍ

Ցպագրեաց Յովսէփ Դալաֆեան

Կը ծախուի Զաքմագճըլար փողոց թիւ 20 և 'ի Քիւրքճի խան վարի յարկ թիւ 23 Յովսէփ Դալաֆեանի գրատունները 'ի գին 20 պահեկանի։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՀՌՉԱԿԱՒՈՐ ՈՃԻՐՔ
ՊՐԻՆՎԻԼԻԷ ՄԱՐԳԻԶՈՒՀԻ

Հեղինակ Աղեքսանդրա Տէ-մա

Թարգմանիչ Մ. Ց. Մելիքեան

Հրատարակիչ Ս Գ. Պարսիզպանեան

Այն հետաքրքրական պատմութիւնը, որ ընտիր պատկերներով ճոխացեալ է, Հայրենիքի խմբագիր Մ. Ց. Մելիքեան էֆէնտիի թարգմանութեամբ 'ի լոյս ընծայեալ ըլլալով, կը ծախուի բոլոր գրատաճառաց քով ի գին 7 ղրուշ։

Իսկ կեդրոնատեղին է՝ Եէնի ճամի Զիլենկիրլեր ճառատեսի Ս. Ղուկասեան գրատունը, ուր կը ծախուի նաև «Աբուլեսա երկայնակեցութեան» անուն օգտակար գիրքը ի գին 10 ղրուշ։

ԴԱՍԱԳԻՐՔ
ՀԱՅ-ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Հատոր Բ.

Կը ծախուի ամեն Հայ գրատաճառաց քով, ի գին 8 ղրուշի։

ՏՆԱԿԱՆ ԲԺԻՇԿ
ՀԵՂԻՆԱԿ
ՏՈՐԹԼՈՐ ՎԱԼԻԹԻԼ

Թարգմանիչ Ե. Մուրատեան

Հրատարակիչ Ս. Գ. Պարսիզպանեան

Այն օգտակար գրքոյկը, որ առաջինն է իւր տեսակին մէջ, ընտանեաց մէջ պատահած հիւանդութեանց ապրուս դարմաններ կառաջարկէ և օգտակար խրատներ կուտայ։ Մեր ընտանեկան կենաց շատ յարմար դարձ մը լինելով, լաւագոյնդ մը կրնայ լինել մեր ընտանեաց։

Կեդրոնատեղին է Ս. Ղուկասեան գրատունը և կը ծախուի ամեն գրավաճառաց քով 'ի գին 6 ղրուշ։

ՆՈՒԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆԻ
Բոլանդուսլեան

Թիւ 11 Տէր կեցո՛ զՀայաստան։ Հապա քաջազունք։

Թիւ 12 Արտասուք։

Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով, գին մէկ տեսարի 2 ղրուշ մէճիտ։ իսկ 24 թերաց բաժանորդագրին 40 ղրուշ։

ՇԱՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇԱԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ
1880 ՕԳՈՍՏՈՍ 1 ՈՒՐԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժ.	Ե-ր-գ-լ-ն Է-ջ-ր	Թ-
11 45	Եկեղեցական Մէզարպուրնու. Պէյլիքտէրէ՝Թարապիա Եկեղեցի Սիմէոնա. Պոյանտքէյ. Բուսիլի Հիսար. Պէպէք. (Արեւուստ գիւղի շաղեանին հետ պիտի հաղորդակցի.)	34
11 45	Ր Ա Գավագն Եկեղեցական. Մէզարպուրնու. Պէյլիքտէրէ. Թարապիա. Եկեղեցի. Էմիրկեն Պոյանք. Ր. Հիսար. Պէպէք.	28
1 15	Եկեղեցական Մէզարպ. Պէյլիքտէրէ. Թարապիա, Եկեղեցի. Էմիրկեն. Ր Հիսար. (Ուրբաթ օրերը Պէպէք)։	33
2 15	Եկեղեցական Մէզարպուրնու. Պէյլիքտէրէ. Թարապիա. Եկեղեցի Սիմէոնա. Էմիրկեն, Պոյանքէյ. Ր. Հիսար, Պէպէք	18
3	Ա. Գավաք. Եկեղեցական Մէզարպ. Պէյլիքտէրէ. Թարապիա. Եկեղեք. Էմիրկեն. Պոյանքէյ. Ր. Հիսար, Պէպէք. Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ.	34
4 15	Եկեղեցական. Մէզարպ. Պէյլիք. Թարապ. Եկեղեք. Սիմէոնա. Միրկեան. Պոյանքէյ. Ր. Հիսար Պէպէք. Արնավուտքէյ. Գուրուչ. Օրթաքէյ. Պէշիկթաշ։	28
5 30	Եկեղեցական Մէզարպուրնու. Պէյլիքտէրէ. Թարապիա. Եկեղեցի. Սիմէոն. Էմիրկեն. Պոյան, Ր Հիսար Պէպէք, Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ։ (Ուրբաթ օրերը Սիրքէճի չը հանդիպիր)։	33
6 15	Եկեղեցական. Պէյլիք. Թարապ. Պէյքօղ Եկեղեք. Միրկիան. Գանլըճա. Ր. Ա. Հիսար. Գանտիլի. Արնավուտքէյ. Զէնկէլքէյ. Պէյլերպէյի. Օրթաքէյ. Գուզկունճուք. Պէշիկթաշ. Խսկիւսար։	4
8	Ա. և Ր. Գավագ. Եկեղեցական. Մէզարպուրնու. Պէյլիքտէրէ թարապեա. Պէյքօղ. Եկեղեքէյ. Էմիրկեն. Պոյանքէյ. Ր. Հիսար, Պէպէք. Անավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ. (Ուրբաթ օրերը Սիրքէճի)	20
10	Մէզարպուրնուէն Պէյլիքտէրէ. Թարապիա. Եկեղեքէյ, Էմիրկեն, Ր. Հիսար, Արնավուտքէյ. Օրթաքէյ, Պէշիկթաշ	22

Աբնավուտ էնէն

11 30	Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ։	23
12	Արնավուտքէյ, Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ. Գասպաթաշ։	25
12 30	Պէպէք. Արնավուտքէյ. Գուրուչէշմէ Օրթաքէյ. Պէշիկթաշ. Գասպաթաշ։	22
1 15	Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ. (Բացի Ուրբաթէ)։	2
2	Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ. Պէշիկթաշ Գասպաթաշ։ (Ուրբաթ օրերը ժամը 1 30 ին կելնէ)։	23
2 45	Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրթաքէյ, Գուզկն, Պէշիկթաշ։	25
3 30	Արնավուտք. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։ Գասպաթաշ։	22
8 15	Արնավուտքիւզէն ուղղակի կամուրջ։	23
10 45	Արնավուտք. ուղղակի կամուրջ։	25

Ա-ֆ-ոն էն-էր

11 15	Պէյքօղ։ Բաշտարախշէ. Բիֆամի փաշա մահալլէսի. Գանլըճա։ Ա. Հիսար։ Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլերպէյի. Գուզկունճուք։	19
11 15	Արնավուտքէյ. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլերպէյ. Գուզկունճուք. Գասպաթաշ։	4
12	Պէյլիքտէրէ. Պէյքօղ Բաշտահանէ. Գանլըճա. Ա. Հիսար։ Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլերպէյի. Գուզկունճուք Գասպաթաշ։ (Ուրբաթ օրերը ժամ 12. 45ին)։	17
2	Պէյլիքտէրէ. Թարապեա. Պէյքօղ Բաշտահանէ. Ր. Բ. մահալլէսի Գանլըճա. Ա. Հիսար։ Գանտիլի, Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլերպէյի. Գուզկունճուք. Պէշիկթաշ (Բացի Ուրբաթէ։	20
4 30	Պէյքօղ։ Բաշտահանէ. Ր. բաշա մահալլէսի Գանլըճա։ Ա. Հիսար։ Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլերպէյ. Գուզկունճուք. Սիրքէճի (Ուրբաթ օրերը Սիրքէճի չհանդիպիր)։	17
8 45	Պէյլիքտէրէ Պէյքօղ։ Բաշտահանէ. Գանլըճա. Ա. Հիսար Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ Պէյլերպէյ. Գուզկունճուք. Խսկիւսար (Ուրբաթ օրերը Բիֆամի փաշա մահալլէսի)։	19
9 15	Վանիքէյէն ուղղակի կամուրջ։	2
10 50	Գուզկուճունճուքէն ուղղակի կամուրջ։ (Բացի Ուրբաթէ)։	23

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժ.	Ե-ր-գ-լ-ն Է-ջ-ր	Թ-
12 45	Գասպաթաշ. Խսկիւսար Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաք. Պէյ. Զէնկ. Արնավ. Գանա. Ա. Ֆ. Ր. Հիսար։ Գանը Էմիրկեն, Եկեղեք Պէյքօղ Թարապ. Պէյլիք. Եկեղեցական։	4
1 15	Պէշիք. Օրթաք. Արնավ. [Ր. Հիսար։ Պոյանք. Եկ-եղեք, Թարապ, Պէյլիք, Մէզարպ, Ր. Անատոլու Գավաց։	34
2 15	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար։ Գանլճ, Միրկեան, Եկեղեք Թար. Պէյլիք. Մէզար. Եկեղեմ.	28
3 15	Պէշիկ. Օրթաք. Գուրչէշ. Արնավ. Պէպէք Ր. Հիսար։ Էմիրկ. Սիմէոնա. Եկեղեք. Թարապ. Պէյլիք. Մէզարպ. Եկեղեցական։	33
5	Գասպաթաշ։ Պէշիկ. Օրթաք. Գուրուչէշմէ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար։ Պոյան. Էմիրկեն. Եկեղեք. Պէյքօղ. Թար. Պէյլիք. Մէզարպուրնու. Եկեղեցական. Գավագլար.	22
6 30	Խսկ. Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաքէյ. Պէյլերպէյի. Զէնկէլքէյ Արնավուտքէյ Գանա. Ր. Հիսար։ Գանլըճա. Էմիրկեն. Եկեղեք, Թարապեա. Պէյլիք.	19
8	Արնավուտք. Պէպէք. Ր. Հիսար Միրկիան. Եկեղեք. Թարապեա. Պէյլիքտէրէ Մէզարպուրնու։	22
9 15	Պէշիքթաշ։ Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար Պոյանքք. Սիմէոնա. Եկեղեք։ Թարապ. Պէյլիք. Մէզար. Եկեղեցական։ (Բացի ուրբաթէ)։	28
10	Ր. Հիսար։ Պոյանքքէյ. Եկեղեք. Թար. Պէյլիք. Մէզարպ. Եկեղեցական. (Ուրբաթ օրերը Պէպէք)։	33
10 30	Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյանքքէյ. Էմիրկ Սիմէոն. Եկեղեք. Թարապ. Պէյլիք. Մէզարպ. Եկեղեմ. (Ուրբաթ օրերը Պէշիկ. հանդիպելով)։	18
11 10	Պէպէք Ր. Հիսար։ Պոյան. Միրկիան, Սիմէոն. Եկեղեք. Թարաբ. Պէյլիք. Մէզար. Եկեղեցական։	20

Աբնավուտ էնէն

12 30	Պէշիքթաշ։ Օրթաքէյ. Արնավուտք։	23
1 45	» »	25
2 30	Պէշիկթաշ։ Օրթաքէյ. Արնավ.	2
7 30	Պէշիք. Օրթաք. Գուրուչ, Արնավ,	23
10	Պէշիկթաշ։ Օրթաք. Գուրուչ. Արնավ.	25
11 5	Գասպա, Պէշիկ, Օրթաք, Գուրուչ. Արնավուտ.	2
11 20	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավուտ։ (Բացի Ուրբաթէ)։	23
11 40	Պէշիքթ. Օրթաք. Գուրչ. Արնավ. Պէպէք։	22
12	Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Արնավ.	4

Ա-ֆ-ոն էն-էր

2	Խսկիւսար Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար։ Գանլ. Բիֆամի բաշա մահալլէսի Բաշտապ. Պէյքօղ։	17
8 30	Գուզկունճուք. Պէյլերպէյ. Զէնկ. Վանիքէյ։	2
9 30	Գասպաթ. Գուզկ, Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլի։ Ա. Հիս։ Գանլ. Բաշ. Պէյքօղ։ Մէզարպ. Ր. Ա. Գավաք։	17
10 30	Գասպաթաշ(Պէշիք. Գուզկ. (բացի ուրբաթէ)։	23
10 30	Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլ. Ա. Հիսար, Գանլճ. Զուպուպ, Բաշտապ. Պէյքօղ Թրպ, Պէյլիք։ (Ուրբաթ օրերը Գուզկ.)։	34
11	Պէշիք։ Գուզկ. Պէյլերպ. Զէնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար։ Գանլ. Բաշտապ. Պէյքօղ։	19
11 10	Գասպաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Արնավուտք.	25

ԻԼԱՆ

Խասթախանէ փասաուշը
Էճնաս քէօհնէ այադ դապը
Գաֆա փարչասը
Պէյքօղ փարչասը
Եայրը փարչա
Քէօսէյէ Քըրվընաքսը
Մէչին փարչասը
Սադիր Էրնիմին

Տէպպասիանէի ամիրեան մէվճառա պուլունան պարատէ մուհարբէր եէսի ճինս էշեա վէ սայիրէ թաղիպղերինէ ֆիրուխթի օլունաճաղընտան, թարիխի իրանտէն ելթիպարէն։ Հէր բաղար կիւնէրի տեպպասիանէճէ միւզայիտէսի տերտէսիմ պուլունմըշ սրր։

7 Աղօսթոս 1880

Տէր սատատէթատէ պուլունան էրքեան վէ իմերա վէ զապելեան իլէ սիֆարիշաթի իչուն մախսուս օլան մուայէնաթներ այնէն ալտճադ օլանլեր քէմաֆիսապրդ անպարլերինանէն ախզ էյլէմելերի թապիի օլուա՝ ազդան ալթը սէնէսի շէհրի աղօսթոսնանան իթիպարէն, մուայէնաթը մախսուսէրերինի պէտէլէն ալմադ իսթէ յէնէր, ազդուճա լեվազիմաթ տաբիրէսի վեղնէսինէ միւրաճաաթ էյլէմելերի իլան օլունուր։

7 Աղօսթոս 1880

ԿԱՐԴԱՑԷՔ

Պ. Վ. Ծանոյի 1867ին հիմնած, և անցեալ Մայիս 3ին հրկիզեալ հրաշակաւոր Արեւանշան դեղարանն դեղեցկապէս նորոգուելով վերսին բացուեցաւ։

Դեղորայք, վիրաբուժական գործիք, անուշահոտութիւնք և անընդական նիւթք նորոգ հասկալեւորպիոյ, արագութիւն ծառայութեանց, և ուշադրութիւն ի պատրաստութեան դեղագրոց։

Մեծաքանակ վաճառմանց համար, Պ. Վ. Ծանոյի՝ Պահճէ գափու ճէլալ պէյ խանն ունեցած դեղարէից մեներանոցը պահած է, ուր դաւառաց համար յանձնարարութիւնք կ'ընդունուին։

Բերայի մեծ փողոցին մէջ 185շէն ի վեր հիմնեալ դեղարանը՝ Պ. Վ. Ծանոյի որդւոյն վկայեալ քիմիագէտ Ժ. Ծանոյի անօրէնութեան ներքեւ է։

Տունն յԱգրիանաւոլիս, գործարան ի Բեռա։ Գինք խիստ չափաւոր։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Այրարքիեան և ընկերութեան գործակալութիւնը պատիւ ունի արդոյ հասարակութեան ծանուցանել հետեւեալները։

1. Կալուած այսինքն տուն, խանութ, պանդոկ, ագարակ, պարտէզ և հող ունեցող և զանոնք կամ վաճառել և կամ վարձու տալ սղղոյ անձանց անուանց արձանագրութեան համար տուփար մը բացուած է, որպէս զի իւրաքանչիւրին պատշաճեալ գործերն դիւրութեամբ ի գործ դրուին։

2. Ընկերութեանս գործակալութիւնը համբաւաւոր սեղանաւորաց հետ յարաբերութեան մտնելով թէ Կալամպայի և թէ Պոլսոյ կողմերը գանուող և իրեն հանոյ երեւցող քարուկիր տուն կամ խանութ, դոհարեղէն, ոսկեղէն և արծաթեղէն ինչք ու վաճառք դրաւիդնելով, Դրամական փոխառութիւն ընել ուզող անձանց չափաւոր տոկոսով և դրաւին ընական արժէքէն 30 0/0 զեղջմամբ հաշիւ մտնելու պայմանաւ դրամն պիտի կարենայ դանել։

3. Ընկերութեանս գործակալութիւնը ամեն տեսակ վաճառք կամ կարասիք վաճառելու և դնելու և դիւրադիր ապահովութեան դընել տալու փափաքող անձանց դիւրութիւն մը ընծայած ըլլալու բաղձանքով սոյն պաշտօնը սահմանեալ ըլլալով, միրջապէս թէ դրամատէրերու, թէ դրամի պէտք ունեցողներու և թէ վերոյիշեալ ընկերութեան անձամբ կամ գրով դիմելու ատենին յոյժ զոհ ըլլալին կը յայտարարէ։

Կալաթա Խավեար խան թիւ 67

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Առաջին կարգի վկայեալ փառատաբանեալներէն Ղազարոսեան Գրիգոր Էֆէնտին իւր գրասենեակը փոխադրած է Ֆինճանճըլար փողոց Աբուլեղեան շուկայ (Շարք չարշըսի) թիւ 37 սենեակը։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեծ. Կ. Էֆէնտի ճիկէրճեան պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ Ն. 2 Սինկը կոչուած կարի մերենան և իր գործիքները Ամերիկայէն բերել տալով կ'էս գնովը կը վաճառէի։ Նոյնպէս և զանազան տեսակ նոր և ընտիր ապրանքներ, զորս կրնայ արժանադիր ալ իրեն դիմող յանախորդայ։ Կեդրոնատեղին է կարին Բերդին մէջը, Կ. Ճիկէրճեան թիւ 71 մաղազան։

ՁԵՐՄԻ ԴԵՂ

Տօրթոր Այերի Ջերմի դեղը ամենայն իցէ տեսակ Ջերմ խլկոյն կը բժշկէ։ Կայ դեղ մը որ ասար չափ օգտակար ըլլայ Ջերմի, Ջերմ բռնողները պարապ տեղը կը տանջուին քանի որ սա դեղը կայ, պէտք է որ անմիջապէս անկէ դորձածեն։ Արդէն Պոլսոյ և գաւառաց էջ ճանչցուած է սա դեղը ու անով բժշկուողները դիտեն անոր յարդը։ Նախ ուրիշ տրամի չափ հէնդ եաղէ խմելու է իրրև մաքրողական դեղ ու ետքը սա Ջերմի դեղէն (Ջերմը չբռնած) օրը չորս անգամ մէյմէկ անուշի գրգալ ու ջրի հետ խառնելով խմելու է, անմիջապէս կանցնի։ Տղայոց աւելի քիչ տալու է։ Կը ծախուի՝ Կ. Պոլիս Գալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։



ՋՐՀԱՆ

Ամերիկայի Ջրհաններ մեծ և փոքր, երկաթ թէ հատատուն խողովակներով թէ ջրշեղջներու և թէ խառնիկ հորերու համար ժամանակներով կը ծախուի, Կ. Պոլիս Գալաթիայ Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իլիթիներուն ամենէն աղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մարիր և աղէկ կը գործէ, կը ծախուի Կ. Պոլիս Գալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի՝ բաց 'ի կիրակի և ազգ օրերէ։

Բաժանորդագրութեան տեղն Գալաթիա Սանտըգճիլար ճառատէսի թիւ 198, Նորօ խան Մարսիլի խմբագրատունը։ Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հողարարձուաց գրասենեակները.

ԿԱՐԻՆ. Յոհաննէս էֆ. Տ. Մելքիսեդեկեան.
ԵՐԶՆԿԱ. Ց. Շաւարշ էֆ.
ՍԵԲԱՍՏԻԱ. Նազարէթ էֆ. Ց. Խաթանսղլեանց.
ՍԱՄՍՈՒՆ. Եղուարդ էֆ. Մուրատեան.
ԿԻՐԱՍՈՒՆ. Գ. էֆ. Ի Մարտանեան.
ՈՒՏՈՍՊՕ. Սրժ. Տ. Արիստակէս ատաղ քահանայ Ֆէլպեան.
ԶՄԻՒՌՆԻԱ. Աբրահամ էֆ. Պէրզամանեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խորով էֆ. Էսկիճեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Ս. Էմմէթ քեան էֆ
ԵՒԴՈԿԻԱ.
ԲԱԲԵՐԴ և ՏԷՐՍԻՄ. Կիրակոս էֆ. Ե. Ղազանճեան.
ՄՈՒՇ. Յակոբ էֆ. Ծերունեան. Վ.Ա.Ն.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ. Գէորգ էֆ. Ոսկերչեան.
ՖՕՔՇԱՆ. Ֆէրհատ » Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղէանդեան.
ԿԱՅԿԱԹԱ. Պետրոս էֆ. Հէքիմեան.

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
ԳԱԼԱԹԱ ՆՈՐՕ ԽԱՆ